




ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 182

15 ՓԵՏՐՈՒՄ 1915

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

Աթուանիստ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, առաջիկայ Մեծ Պահոց կիւրակի օրերուն քարոզները թուրքերէն լեզուով պիտի տրուին նոյն եկեղեցւոյ Մեծաւոր Գեր. Կղեմէս Վ. Աստուրեանի կողմէ, հետեւեալ նիւթերուն վրայ.

Ա. Կիրակի. Անկրօնութիւնն է աղբիւր աշխարհիս վրայ տիրող չարիքներուն:— Անոր պատճառները:

Բ. Կիրակի. Անկրօնութեան հետեւութիւններն ու պատիժները:

Գ. Կիրակի. Անտարբերականութիւնն է երկրորդ աղբիւր աշխարհիս վրայ տիրող չարիքներուն:—Անոր պատճառները:

Դ. Կիրակի. Անտարբերականութիւնը Աստուծոյ դէմ ոճիր մըն է:


Ե. Կիրակի. Անտարբերականութիւնը ոճիր մըն է նաև ընկերին և նոյն իսկ իր անձին դէմ:

Ծանօթ.—Կիրակի օրերը ժամը 4ին երեկոյեան ժամերգութիւն պիտի կատարուի եւ անմիջապէս յետոյ քարոզ պիտի տրուի:

Անոնք որ կը փափաքին Արճագանցի պակաս թիւերը լրացնել, իւրաքանչիւր թիւի համար մէյմէկ դահեկան ղրկելու են:

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՒՆՀԱԴՈՍ Կ. ՀԱՅՈՑ

Տպագրութիւնը աւարտած է և կը ծախուի 40 դահեկանի:
Գաւառներու համար փոսքայի ծախք 10 դահեկան:



ԳՐՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱՌԱԿԱՆ
ՀԱՐԱՐ-ԱՐ-ԵՐՐ-

Հիմնադրվել է 15 Փետրուար 1915 թ. 182

Մեր ծնունդն Բահաւայապետն Պիոս Ժ. Մկրտչապետ որ Կաթողիկէ Արձապանը շաբաթաբերր շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովոցոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարաւ առաքելութիւն մը կե-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներս: Այս մտղ քանան արիւնհատուրդեան հապա-
Մըրցալան Հայրն ւրսույնն կ'օրինէ յետեւ Շաբաթաբերր, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողներն:
Ետեւան Կաթողիկէ Մկրտչապետն Ս. Պօղոս Սեփարս Ժ. Թեոքեան Հայ-Կաթողիկէ Պատրիարքին խորհրդով:
28 Դեկտեմբեր 1912, ընդ 60780, քող ահաւանդաւ:

ԴԵՊՅԵՆ ԵՒ ՍԿԶՐՈՆՔՆԵՐ

ՏԵՂԱՊԱՀԻՆ ԴՈՒՐԶԸ

Տեղապահին գաղափրամբը մեր հա-
սարախութեան գործերը կարգի մտնելու
գիշերը առած են։ Ասոր երաշխաւորութեան
մին է զբաղակարութեան բարի
տրամադրութիւնը, հոգեւոր իշխանու-
թեան զիջող զոհողութիւնը, նոյն ինքն
Արհիւ Սայեղեան Աղբի խոհեմազարդ
արժանաւորութիւնը, որուն շուրջ դիւ-
րաւ կը ժողովէ ամէն դասակարգ և յոյս
կու տայ մտտենալու անով հոգեւոր իշ-
խանութեան։ Այս է բաղձալիք, այս է
հաւանդ մանաւանդ խանգարողութեան

խաղաղութեան կը հրաւիրէ զամէնքը: Եւ երբ իր հրաւերքը հանդիպի ժողովուրդի արժանաւորութեան և հաճութեան, այն ատեն է որ հասարակութեան մը, ազգի մը փրկութիւնը ապահովուած է. «Յիշէ՛ զմեզ, ո՛վ Տէր, քու ժողովրդեանդ հաճութեան հետ և այցելէ՛ մեզ քու փրկութեամբդ» (Սղմ):

Ասոր համար կարեւոր է ամենուն կողմէ ուղիղ ըմբռնում խնդրոյն, առանց կրքի և շահու զայն վերջացնելու բարի կամք, ուղիղ դատողութիւն, սկզբանց բացորոշ հաւատարմութիւն ու խոնարհ հպատակութիւն:

Տեսնենք այս սկզբունքներէն մի քանին:

* *

Մենք Հայ ըլլալով հանդերձ Կաթողիկեայ ենք և հոյսսակ օսմանեան: Իբրեւ հայ չունինք ոեւէ առնչութիւն և կապ էջմիածնականաց հետ. 1830էն առդին ուրոյն հասարակութիւն մը կը կազմենք: Հետեւաբար ազգային տեսակէտով չենք կրնար տարուիլ անոնց մէջ տիրող կուտակցական հոսանքներէ: Կրօնքի տեսակէտով չենք կրնար ո՛չ առնոնց եկեղեցական կազմակերպութեան ո՛չ ալ սկզբունքներուն հետեւիլ. իսկ քաղաքական տեսակէտով չենք կրնար անոնց ուղղութեան կապուիլ: Իբրեւ Հայ մշակելու ենք մեր լեզուն, պատմութիւնը, ծէսը, արարողութիւնները և ասոր մէջ պէտք չունինք էջմիածնականաց դիմելու. իբրեւ Կաթողիկեայ պիտի պահենք մի, Կաթողիկէ և Առաքելական (եկեղեցւոյ սորվեցուցած հաւատքը ամբողջ՝ մինչեւ ցյետին նշանախեց, պիտի մնանք յարատեւ հաւատարմութեամբ

կապուած նոյն եկեղեցւոյ կեդրոնին Հռովմայ եկեղեցւոյ և անոր Պետին՝ Վիմին Պետրոսի Յաջորդին, Քրիստոսի Փոխանորդին, Ս. Քահանայապետին հետ. իբրեւ օսմանեան հպատակ՝ պիտի շարունակենք մեր անայլալ ու անխաղախ հպատակութիւնը և հնազանդութիւնը կառավարութեան և իր օրինաց: Այս ամէնը մեր պարտքն է և չենք կրնար զանցառու գտնուիլ ու դրժել:

Ասոր հետ մէկտեղ սակայն չինք մոռնար սիրոյ օրէնքը, որուն կարգաւոր ստիպման տակ, մեզմէ վերջը, կը պարտինք սիրել մեր համազգայիները ո՛չ միայն իբրեւ մարդ և հպատակակից, այլ նաեւ իբրեւ ազգակից: Այս օրինօք պիտի ընթանանք միշտ ջանալով օգտակար ըլլալու իրենց ամէն տեսակէտով և պատմութիւնը կեցած է վկայելու թէ Հայ-Կաթողիկեայ եկեղեցին ինչ ծառայութիւններ ըրած է: Այս օրինօք պիտի ջանանք՝ հակառակ անգիտակցական աքացումներու՝ իրենց հոգւոյ յաւիտենական շահը հոգալու դաստիարակութեան, կրթութեան, քաղաքացիութեան այն սկզբունքներով, որոնք միայն կործանարար յեղափոխութեան առջեւ կրնան առնուլ: Այս օրինօք երբեք պիտի չքաջալերենք կրօնամարտ հոգին, պիտի չխրախուսենք իրենց պետերու դէմ ապստամբութիւն ու հայ անունը անպատուող խայտառակ ցոյցեր ու շարժումներ. իշխանութեան աչքին տակ չպիտի անտեսենք զինքը՝ ճանշնալու համար իրեն դէմ ճակատող անզգաստ խմբակ մը: Այս օրինօք, կարգի, կանոնի, կենցաղադիտութեան սկզբանց հաւատարիմ, պահպանողական անկեղծ ընթացք մը պիտի բռնենք: Մանաւանդ

Սիրոյ վարդապետին ճշմարիտ աշակերտներ ըլլալով, Անոր յաջորդաց արժանաւոր բառերովը կը յայտարարենք. Բաւ լիցի որ Կաթողիկէ եկեղեցւոյ որդիներս ունէ եղանակաւ թշնամանամք անոնց, միայն անոր համար որ մեզ հետ նոյն հաւատոյ եւ սիրոյ զօրերով կապուած լին, այլ մանաւանդ պիտի ջանամք ինքեզ զանոնք ֆրիստնեական սիրոյ ամեն գործերով թէ՛ երբ սնանկ, թէ՛ հիւանդ, թէ՛ վշակիր ըլլան ունէ աղէտներով (Պիոս Թ. Շրջբ. 10 Օգոստ. 1863). Հոգ չէ թէ ասոր փոխարէն չարիք ընդունինք. մենք սիրոյ օրինօք բարիք պիտի գործենք. հոգ չէ թէ անիծեն, մենք պիտի օրհնենք. հոգ չէ թէ ատեն, մենք պիտի սիրենք. Այս է Կաթողիկէութեան բնորոշ գործելակերպը եւ մենք չենք կրնար անկից զարտուղիւ:

* *

Կը մնայ որ հաշտ պահենք Հայկաթողիկէայ - օսմանեան սկզբունքները՝ իբրեւ միակ դրօշակի երեք գոյները. Առաջին երկուքը կը պահանջեն ինչ որ մեր ուղղադաւան Սուրբ Հարբ, Լուսաւորչէն մինչեւ Կիլիկիոյ Տան պատրիարքները ցայսօր ըրած են եւ որ ամենը հիմայ ունինք ամփոփուած վերջին սինհոդոսական գործոց մէջ. Բաւական է հետեւիլ. «Կը ինկրեմք ուրեմն, որ յօժարի ամէն ոք մեկ կողմ նետել ամէն նախապաշարմունք, որով առիթ տրին զոգնելու մաս մը ժողովրդեան ընդդէմ անոնց, որով կը սիրեն զայն իբրեւ ճշմարիտ հայր. եւ ընելու են այս յօգուտ եկեղեցւոյ եւ մեր ազգին, որ երկուքին միութիւնն ու համամտութիւնը աղէտն ըստ ինքեան ընկերական եւ կրօ-

նական պարսկանութիւն մըն է. հարկ է վստահութիւն ունենալ նուիրապետութեան վրայ եւ սխալ չմեկնել անոր դիտաւորութիւնները (Հմտ. Ա. Թղթ. Սինհոդական 3—4). Այդ դիտաւորութիւնները նոյն եղած են եւ նոյն պիտի մնան Ս. Քահանայապետի մտաց հետ, որ նկատի առնելով ժամանակիս առանձին պայմանները եւ տեսնելով Հայ եկեղեցւոյ ներկայ վիճակը, երկպառակութեանց թոշոյնները մեր մէջէն արմատախիջ ընելու համար, իրաւացի վրայ վիճելու առջեւը առնելու համար, եկեղեցական քարեկարգութիւնը ամրապնդելու, մեր օրինաւոր աւանդութիւնները ու սովորութիւնները հաստատելու, կղերականաց եւ աշխարհականաց պարսֆերը որոշելու համար, հաւաքեց Սինհոդոսը, անոր գործերը գլուխ հանել տուաւ ու հաստատեց. Այսպէս կրօնական ու ազգային զգացումները կը դրկախառնուին կը հաշտուին հիմնեալ եւ մնացական հաստատութեամբ. վասն զի նուիրապետութիւն եւ ժողովուրդ իրենց որոշ տեղն որ մնան ըստ սահմանեալ կանոնաց, անոր իրաւունքներն ու պաշտօնները ժողովուրդի ինչ ինչ մասնակցութենէն չեն վտանգուիր, այլ ընդհակառակը կ'օգտուին:

* *

Կաթողիկէայ եւ օսմանեան սկզբանց հաշտութիւնը շատ դիւրին է, թէ՛ որովհետեւ Կաթողիկէ եկեղեցին ամէն կառավարական ձեւի կը յարմարի եւ թէ՛ մանաւանդ եկեղեցական ու քաղաքական իշխանութիւնները Աստուծոյ ըրած, սկզբունքով, չեն կրնար ընդհարիլ՝ արդարութեան եւ իրաւանց սահմանին:

մէջ։ Միւս կողմէ օսմանեան կառավարութենէ մեր նուիրապետութեան շնորհուած քաղաքական ճոխութիւնները չեն կրնար երբեք բախիլ եկեղեցական ճոխութեանց կամ զասոնք կրճատել, կամ այդ պատրուակաւ ժողովրդային քմահաճոյից ծառայեցնել։ Վասն զի այս քաղաքական ճոխութիւնները տրուած են ի շնորհս հոգեւոր իշխանութեան, հետեւաբար անոնցմով ասոր դէմ զեղծանիլը սրբապղծութիւն է (Հմտ. Սին. Թ. 66)։

Եւ ոչ կարելի է ենթադրել բախում մը այս մասին Օսմանեան Պետութեան և Ս. Աթոռոյ մէջ, քանի որ սա անոր քաղաքական գերիշխանութիւնը կը ճանչնայ, կը յարգէ և անոր հնազանդութիւնը խղճի պարտք կը դաւանի ամէն կաթողիկէից համար։ Իսկ նա կը ճանչնայ, կը յարգէ ասոր կրօնական գերիշխանութիւնը ամէն կաթողիկէից վրայ։ Ուստի ներդաշնակութիւնը կատարեալ է։ միայն չարամիտ իմաստակութիւն մը, կամապաշտ անաստութիւն մը կամ յամառ տգիտութիւնը կրնայ տարաձայնութեան պատրուակներ ստեղծել և պղտորել զայն։

Կա՛մ օսմանեան կա՛մ կաթողիկեայ ըլլալու չէ, միոյն կամ միւսին սկզբանց և օրինաց դէմ ուրիշ իրաւունքներ և պահանջներ կանգնելու համար։ Երկուքին մէջտեղ ճժգոյն ազգայնութիւն չենք ճանչնար, այլ մեր ազգայնութիւնը կը մնայ և է օսմանեան հպատակութեամբ և կրօնքով կաթողիկեայ հայութիւն։ Ուստի ո՛չ ինքնավար ենք ազգութեամբ, ո՛չ անկախ ենք եկեղեցեալ։

Հետեւաբար լաւերորդ է առ այժմ երկարել խօսքերնիս ազգային ըսուած

իրաւանց մասին։ Վասն զի եթէ ազգային ըսելով քաղաքական կ'իմացունին, ասոնք կը մնան Գերագոյն Վեհապետին ձեռքը, և Ասոր միայն կ'իյնայ ըստ օրինաց դատել և վճռել զանոնք իր հպատակաց օգտին չափով։ Եթէ եկեղեցական իրաւանց վրայ է խօսքը, ոչ ոք կ'անգիտանայ թէ կաթողիկեայք չեն ճանչնար երբեք ազգային կամ ժողովրդական իրաւունք եկեղեցւոյ և նուիրապետութեան և անոր սահմանադրութեանց վրայ։ Ազգային եկեղեցւոյ պատրուակն ալ չարժեր Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, վասն զի նա իւրաքանչիւր ազգի օրինաւոր աւանդութիւններն ու սովորութիւնները պահելով հանդերձ ամէն ազգ անխորի աշնպէս միեւնոյն անուամբ ժողոված է Մայրագոյն Հովուին, Երանելոյն Պետրոսի, Առաքելոց Գլխաւորին իշխանութեան ներքեւ... որ, ըստ Առաքելոյն բացատրութեան, հոն չեն կրնար մնալ ազգայնական խտրութիւններ... այլ ամենայն և յամենայնի Քրիստոս» (Հմտ. Սին. Տիտ. Ա. Գլ. Ա. Թ. 116)։

Հիմնական սխալ մը, որ նոյնպէս ծուռ քայլեր առնել կու տայ անոնց, որ ազգասէրի անուամբ ազգամոլներ են, է այն որ իրենց եպիսկոպոսաց ժողովը, նուիրապետութիւնը օտար կը նկատեն և ոչ ազգային, մինչդեռ նա ամբողջովին Օսմանեան-Կաթողիկեայ-Հայ եպիսկոպոսներէ կազմուած է։ Եթէ ազգային է, ինչո՞ւ համար ուրեմն սեղմել անոր ձեռնհասութիւնը, շատ տեսնել անոր իր աստիճանին ու պաշտօնին անհրաժեշտօրէն կարեւոր իրաւունքներ, ինչո՞ւ համար անոր ճոխութիւնը ազգային չնկատել։ Անիկայ ալ ազգային չէ՞, անիկայ ազգին ընտրեալոյն

տարրը չի ներկայացներ. անիկայի պաշտօնէ իսկ հասարակութեան շահերուն ծառայող, անտեսող ու վարող դասակարգը չէ: Ինչէն Գլխաւ մը, կուսակցականներու խմբակ մը կրնայ ոչ միայն ազգային՝ այլ ազգ իսկ նկատուիլ և ազգի մը հոգեւոր պետերու ի պաշտօնէ առ այդ դրուած նուիրապետութիւնը ազգային՝ իբրեւ ազգին ընտրելագոյն մասը չպիտի համարուի: Այդ սխալէն է պալլաքարի, անարժան ու միաստկար ապրտամբութեան շարժումը, ապա թէ ոչ նուիրապետութեան իրաւունքները և այդ իրաւանց ճիսութիւնները նշաւակ ըլլալու չէին խայտառակ ձեռնմխումներու և ոչ անոնցմով ազգը փնտաւած կարծուելու էր, այլ ընդհակառակն նուիրապետութեան դիրքը զօրացնելու հեռատեսութիւնը ունենալու էր և ունեցողին ալ ձեռնարկները խափանելու չէր: Հաշտասէր զգոնութիւնը, յուսով եղբ թէ շատ մը սխալներ սրբագրել պիտի սայ:

* *

Եկեղեցական և քաղաքական իշխանութեան համերաշխութիւնը և իրաւանց հաշտութիւնը ակնյայտնի ապացուցուեցաւ Տեղապահի ընտրութեամբ, որուն համար Հռովմայ թոյլտուութիւնը և կառավարութեան ալ հոգեւոր իշխանութեան մասին տուած ապահովութիւնները ակնյայտնի ցայտեցուցին երկու իշխանութեանց ալ բարեմտութիւնը և մեր հասարակութեան ալ հանդէպ բարեխնամ տեսչութիւնը: Ով որ չուզէ օգտուիլ, պիտի մատնէ երկրորդական դիտումներու շարութիւնը, որուն չէ կարելի զսնել կաթողիկէութիւն, հայութիւն և օսմանցիութիւն միանգամայն:

Ինչպէս հնար է օգտուիլ գործնականապէս. մանրամասնութիւններն ուրիշ առթի վերապահելով՝ կ'ըսենք. իբրեւ կաթողիկէայ՝ բաւական է յարգել կաթողիկէ եկեղեցւոյ հեղինակութիւնն ու օրէնքները. իբրեւ օսմանցի, յարգել օսմանեան կառավարութեան իշխանութիւնն ու օրէնքները. իբրեւ հայ՝ օրինաւոր աւանդութեանց և սովորութեանց սահմանները:

Առաջինին պահապան և տէր կեցած է հոգեւոր իշխանութիւնը իր սինհոդական օրէնքներովը. երկրորդին պահպան և տէր է քաղաքական կառավարութիւնը իր օրինօք. երրորդին իբրեւ յօդակապ առաջին երկուքին ունինք հիմայ Տեղապահը, որ երկուքին ալ հպատակ մնալով կրնայ այն երկուքին ալ սկզբանց համընթաց ուղղութիւն մը տալ հասարակութեան և այսպէս զայն ամբողջովին մօտեցնել իր հոգեւոր անմիջական իշխանութեան նոյն իսկ ձեռք բերելու համար կանոնադիր մը, որ կաթողիկէութեան և օսմանցիութեան սկզբունքները անաղարտ պահելով՝ դժէ ժողովուրդի ալ օրինաւոր աւանդութիւններն ու սովորութիւնները:

Այս եղածին պէս մեր մեր նպատակը սլարզած կ'ըլլանք կաթողիկէ-Հայ-Օսմանցի միաձոյլ անուամբ, եկեղեցական կանոնաց, քաղաքական օրինաց, հասարակական կանոնագրի համաշունչ ուղղութեամբ:

Ն. 75

ԱՂՕԹԻՐ ԱՇԽԱՐՀԻՍ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ն. Սրբութիւնը, Բենեդիկտոս ԺԵ., վեր-
տահա՛ր ի տես պատերազմին, որ կը փշրէ
այնքան երիտասարդ կեանքեր, որ ընտա-
նիքներն ու քաղաքները սուգի կը մասնէ
և տակնուվրայ կ'ընէ բարդաւած ազգեր-
նկատելով թէ Տէրը, որ պատժելով բժշկի եւ
նեղելով պահպանէ, պութի կը շարժի զղջա-
ցած և խոնարհած սրտերու աղօթքներով.
բաղձալով զէնքերու շառաչիւնէն աւելի
բարձրազորդ հնչեցնել ձայնը հաւատքի,
յոյսի եւ սէրի. որոնք միայն մարդիկները
մէկ սիրտ մէկ հոգի ընելու աստուածային
ուժը ունին, կը հրաւիրէ, կը յորդորէ Ժա-
ռանկաւորներն ու ժողովուրդը մահացուման
գործերու, Աստուծոյ արդար պատիժները
զրգող մեղքերու քաւութեան համար. և
որոշած է միանգամայն, որ բովանդակ կա-
թողիկէ աշխարհի մէջ խոնարհ աղօթքներ
Աստուծոյ ուղղութիւն, անոր զթութենէն այն-
քան բաղձացուած խաղաղութիւնը ընդու-
նելու համար:

Այս նպատակով, Նորին Սրբութիւնը կը
հրամայէ որ Բարեկենդանի նախորդ կիրակին,
առաջիկայ Փետրուար 7ին, Եւրոպայի հա-
մար, — և, աշխարհի միւս բոլոր թեմերուն
համար Չարչարանաց (Գալստեան) կիրակին,
Մարտ 21ին, — կատարուին ամէն մետրա-
պոլիտական, աթոռանիստ, ժողովրդագիտա-
կան, և կրօնաւորական եկեղեցիներու մէջ
մասնաւոր արարողութիւններ՝ հետեւեալ կեր-
պով:

Առտուն, վանական կամ ժողովրդապե-
տական պատարագէն յետոյ հանդիսաւոր կեր-
պով ի բազմոցի պիտի գրուի Սուրբ Խոր-
հուրդը. Խնկարկումէն յետոյ պիտի երգուի
Ծ. Սաղմոսը. Ողորմեա ինձ, Աստուած, և յե-
տոյ կողոյզ. Տո՛ւր խաղաղութիւն, Տե՛ր, յա-
ւուրս մեր, զի չիք այլ ոք մահացեցի ընդ մեր
եքե ոչ դու. Աստուած մեր, և ապա՝ Հ. Եղիցի
խաղաղութիւն ի զօրութեան քու. Գ. Եւ ա-

ռասութիւն յաւուրս քո, և մաղթանք Վասն
խաղաղութեան, Աստուած, յորմէ սուրբ իղձօ
և այլն:

Ամենասուրբ Խորհուրդը ի բազմոցի պիտի
ձևայ օրն ի քուն՝ հանրութեան երկրպագու-
թեան համար, և բաղձալի է որ տղաք ալ
նոյնին մասնակցին պատշաճ չափով:

Իրիկունը Ամենասուրբ Խորհուրդը վեր-
ցուելէն առաջ վարդարան պիտի ըսուի և
ապա պիտի զուրցուի վարը դրուած աղօթ-
քը, զոր Գերագոյն Քահանայապետը յատ-
կապէս յօրինած է խաղաղութեան ատացման
համար. Յետոյ Սուրբերու Լիթանիան պիտի
ըսուի, 1913ի հոռմէական Մաշտոցին մէջ Խ.
Ժամերու ցուցադրութեան համար որոշուած
կարգին համեմատ. Լիթանիայէն անմիջապէս
ետքը պիտի երգուի. Խնայեա՛, Տե՛ր, խնա-
յեա՛ ի ժողովուրդ քո, մի՛ յախճեաւ քարկանաւ
մեզ. և համարները այն աղօթքներուն հետ
որ սովորութիւն է քսել յորում եւ պէտք նե-
ղութեան, ինչպէս հոռմէական Մաշտոցին մէջ,
աւելցնելով Վասն խաղաղութեան մաղթանքը.
Աստուած յորմէ սուրբ իղձօ, եւ այլն:

Արարողութիւնը պիտի աւարտի Արդ այս-
չափի (Tantum ergo) երգով և Ամենասուրբ
Հաղորդութեան օրհնութեամբ, սովորական
եղանակաւ:

Եւ որպէս զի Տէրը աւելի առատօրէն
սփռէ իր շնորհքները, Գերագոյն Քահանա-
յապետը կը յորդորէ հաւատացեալները որ
այս առթիւ Ապուշխարութեան Խորհուրդին
մերձեան և Ամենասուրբ Հաղորդութիւնը
ընդունին և կը շնորհէ Լիակատար Ներողու-
թիւն՝ այն ամէնուն որ խոստովանած և հա-
ղորդուած ըլլալով, առաւօտեան կամ երե-
կոյեան արարողութիւններուն ներկայ պիտի
գտնուին, կամ, քիչ մը առեն, ցուցադրուած
Ամենասուրբ Հաղորդութեան առջեւ պիտի
աղօթեն:

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՍՓԱՐՐԻ
Պետական Քարօւղար

Վասիկան, 10 Յունուար 1915

Ա Ղ Օ Ք Ց

Ազգերն ու ժողովուրդները փոթորկող պատերազմի մը արհաւիրքներէն հա-
մալ տխրած վշտագնած կը դիմենք Քու սիրազեղ Սրտիդ, ո՛վ Յիսուս, իբրեւ մեր
վերջին ապաստանին. Քեզմէ, Աստուած ողորմութեանց, մեր հառաչանքները կ'ա-
ղերսեն ահռելի պատուհասին դադարումը. Քեզմէ՛, Թագաւոր խաղաղասէր, մեր
իզները կը թախանձեն խաղաղութեան այնքան ցանկալի դարձը ։

Քու աստուածային սրտէդ ճառագայթեցիր աշխարհի մէջ սէրը, որպէս զի
ամէն երկպառակութիւն դադրի, սէրը միայն Թագաւորէ մարդոց մէջ. Քու մահ-
կանացու կեանքիդ ընթացքին, հոս, քու սիրտդ բարսխեց ամենագոյտը կարեկ-
ցութեամբ՝ մարդկային դժբախտութեանց համար։ Ա՛հ, թո՛ղ այդ սիրտը շարժի
նաեւ այս ժամուն, որ մեզի համար ծանրաբեռնուած է այնքան դժխեմ ատե-
լութիւններով և սոսկալի նախճիրներով։

Դժա՛ւ այնքան մայրերու, որ իրենց որդիներուն վիճակին վրայ մտահոգ, սըր-
տատանջ կը տառապին. գթա՛ւ այնքան աննեցուկ, որբ ընտանիքներու. գթա՛ւ
վերջապէս դժբախտ եւրոպայի, որուն կը սպառնայ այնքան ահագին կործանում մը։

Դու ինքնին ներշնչէ վարիչներուն և ժողովուրդներուն հեզութեան խորհուրդ-
ներ, լուծէ՛ աղգաւեր կռիւները, ըրէ՛ որ մարդիկ դարձեալ տա՛ն իրարու խա-
ղաղութեան համբոյրը. Դո՛ւն, որ, Քու արիւնիդ գինով, զանոնք եղբայր ըրիր։ Եւ
ինչպէս օր մը, Պետրոս Առաքեալին սա աղերսարկու աղաղակին՝ Փրկէ՛, մեզ, Տէր,
կը կոչուիմք, գթութեամբ պատասխանեցիր, ծովուն մփրկը հանդարտեցնելով.
նոյնպէս, այսօր, մեր վստահալից աղօթքներուն պատասխանէ ներումով, խռովա-
յոյզ աշխարհի մէջ անդորրութիւնն ու խաղաղութիւնը վերահաստատելով։

Դուն ալ, ո՛վ Ամենասուրբ Կոյս, ինչպէս ըրիր ուրիշ ոռոկալի աղէտներու ժա-
մանակներ, օգնէ՛ մեզի, պաշտպանէ՛ մեզ, փրկէ՛ մեզ։ Ամէն։

ՀԻՆ ԱՆԻՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՆԱԼԱԾԱՆՔԻՆ

որ ՏԵՂԻ ՈՒՋԵՑԱՆԻ ՀԱՅ ԿԱՌԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԵԾ
1829, 3 Յունուարի մեջ

(Շար.)

Այս րբերս Հայք շատ ջանացին գաթօ-
լիկները աքսորել, բայց կարող չեղան. աս
չիմացվի տէյի տէրտէրները սկսան տուն տուն
պատիւ ան սնկերը որ հայոցմէ քերայով բռ-
նեցին քաթօլիկները, որ գեղերէ Պէյօղլու
գացեր էին սկսան տէրտէրները հայ տանտէ-
րերու ըսել. Եթէ տներնիւ հերձուածող կայ
նէ հանեցէք, կայսերական հրաման է. հեր-
ձուածող ըսածները քաթօլիկներու համար է,
բայց աս ալ չի կրցան ընել, ասիկայ մէկ ա-
յագ բաթրարսի մըն էր:

Հայոց միտքը աս էր. քանի անգամ է որ
քաթօլիկները աքսորել ուղեցին, չի կրցան,
վասն զի միշտ արգելք մը եղաւ:

Վոյլօտ ըսուած քաղաքը Տէրտէր մը կար
որ ան աստիճանի պէտէ և կողմա մարդ էր
որ մեռած ծնած աղաքը կը մկրտէր. առանց
խոստովանանքի մեռած մարդիկներուն ար-
ձակուած կու տար, միայն թէ չտանի տայնի
իրեն ամէն բան կ'ընէր. Մարսվանի առաջ-
նորդը իմանալով աս բաներս գիր մը կը գրէ
աստէրտէրին որ եթէ իրեն 500 դահկան
տանքաւ, եթէ ոչ Պոլիս պատրիարքին կը
գրեմ ըսելով անոր կը սպառնայ. աս գիրը
Խորասանճեան Յովհաննէս հոն աքսորուած
ըլլալով կը կարգայ:

Ձենկիլէր ըսուած քաղաքը երկու տէր-
տէր կար, մէկը միւսին ոխ ունէր և մեռցնել
կ'ուզէր. օր մը ան տէրտէրը պատարագիչ
էր և ինքն ալ սպասաւոր. ուստի գինիի
բաժակին մէջ թոյն կը դնէ. Տէրտէրը քիչ
մը խմելով կ'իմանայ թէ բան մը կայ մէջը
և կ'ըսէ սպասաւորին. Ե՞՞՞ աս ի՞նչ է. ի՞նչ-
պէս գինի է. Ի՞նչ կայ որ, կ'ըսէ սպասա-
ւորը, թոյն պիտի ըլլայ, իբր թէ ասով չպի-

տի հասկցնէ. կը նայի որ քահանան ալ չի
պիտոր խմէ և յայտնի պիտի ըլլայ. կ'առ-
նու սկիհը ձեռքէն և անկիւն մը կը թափէ
վերջը պարզ գինի դնելով կու տայ քահա-
նային, ահա առջի տուած գինիս ալ ասկից
էր ըսելով: Պատարագը լմնալէն վերջը տէր-
տէրը կը մեռնի: Ահա, ո՛վ կարթացող, աս-
կից իմացիր աս ինչ խղճմտանք է: Աս բանս
Սաղ Բաղարեան Թ. փուղ Սիմոն և քոյրը որ
հոն աքսորուած էին, անոնք կը տեսնայն:

Մէկ քանի բաներ եղած ժամանակնին
չիմանալնուս չի կրցանք կարգը անցնել և
աս տեղ կը գրենք:

Մարապետները և կնիկները աքսորած
ժամանակնին, շատ անուայել բաներ եղան
որ ամենուն յայտնի է. բայց անկից շատ ա-
ռաջ ալ շատ բաներ պիտի ընէին, բայց չի
յաջողեցան, վասն զի Միւսիւ Պիտիւնէ և
Տոն Նիքօլան Սարտենեայի դեսպանին կ'եր-
թան որ աս բաներս արգիլուին, ան ալ փի-
լէմէնկի դեսպանին կը խաւրէ, ինչու որ աս
դեսպանը տէրութեան առջեւ պատուաւոր
էր և իր խօսքերը ազդու էին. ուստի ասոր
ոտքը կ'իյնան. Էֆէնտիմ, կ'ըսեն, Հայք քա-
թօլիկներուն ամէն կերպ անիրաւութիւն
կ'ընեն կոր, բայց ամէն բանէ ի զգաւ, հի-
մա մարապետները, այրի կիները և տարիքը
ամեն աղջիկները գէշ կնկան տեղ դնելով
կամ ուրիշ եղանակաւ և պատճառաւ սնկերը
կը կոխեն, կը բռնեն և կ'աքսորեն կոր. մարդ
իր պատուոյն համար կ'ապրի՝ Ստոնք տէր
չունեն որ տէրութիւն ընող ըլլայ, պէտք է
որ հրամանքով տէրութիւն ընեա, ևն, ևն:

Դեսպանը տաքնալով կ'ըսէ. Դուք գա-
ցէք, Ապրուած ողորմած է. Նոյն ընդ նոյն
Միսիւ Թէթեան կը կանչէ. Գնա՛ Դուռը բէ-
յիզ Էֆէնտիին ըսէ, շատ մը քաթօլիկ կիներ
և աղջիկները Հայք տունները կոխելով կը
բռնեն կ'աքսորեն կոր, իրենց տէրութեան
քիւթիկները բանան և տեսնեն ի՞նչ գրած
է. եթէ աղջիկ մը դօրաքի տալ հարկ ըլլայ
նէ այսինքն ըրդ մը. առաջ քաղաք մը տա-
լու է յետոյ քերդ մը, և անկից վերջը աղ-
ջիկ մը, մտածեն որ երբոր Եւրոպայ տէրու-
թիւնները աս եղած բաները հարցնելու ըլ-

X
Հայրապետ

լան, պատասխան ունին տալու։ Ասոր վրայ
դադարեցաւ աս բանս ապա թէ ոչ մտքէ
ջանցած բաներ պիտի ընէին (Հայք)։
Այսինչոյն Գաղղիոյ պատերազմէն քաթօ-
լիկներուն համար տէրութեան հետ պնդու-
նական եղանակաւ ակաւ խօսիլ։ Հայք աս
բանս խելով մէկմէկ անցան և սկսան խաղ-
հուղ ընել թէ ճար մը ակննք, որ մեղի
վնաս մը չըլլայ և քաթօլիկներն ալ մեղմէ-
լի զատուին։

Օսմանեան Տէրութիւնը Ռուսիոյ տէրու-
թեան հետ հաշտութիւն ընելով, Յունաց
պատրիարքարանը լուր խաւրեց թէ ինչչափ
հոռի մապահանթին ժամանակը իր ազդէն
մարդ արտորուեցաւ նէ անոնց ցուցակը չինէ
և զուր խաւրէ։ պատրիարքն ալ պիտեցած-
ներուն ցուցակը խաւրեց։ Կան ալ որ մէկ
մէկ պատճառներ ան ատեն արտորուեց
էին անոնց անունը և սեղը չինք գիտեր, պրեց
Դրան։ Տէրութիւնն ալ յայտնի եղաք մար-
դիկներէն քառասուն հատի չափ ֆէրմանին
չինել տուաւ և պատրիարքին կրկին լուր
գնաց թէ մեք անոնց ֆէրմանը կը չինենք,
մնացածներուն ալ անունը և տեղը փնտռեն
և բար ասն որ անոնք ալ պրկաին։

1829, 25 Հոկտեմբեր Ուրբաթ. — Սյսօր
քաթօլիկներն իթլաիը կուա։

26 Շաբաթ. — Սյսօր Պէգճեան՝ սորու-
թէ չներուն, խույտմէններուն և քանի մը
մարդ ալ Չարոյխանէյէն՝ ասոնց ֆէրմանը
բերել տուաւ, ամէն մարդու իրենց տէրերը
կանչել տուաւ յանձնեց թուղթերը և ոմանց
ալ ըսել տուաւ որ ամէն մարդու էսնաֆէն
երկու հոգի երթան պատրիարքարանը և ֆէր-
մանին նստուն։ և ֆէրմանները յանձնելով
Կիւսէք։ Աստուած Սուլթան Մահմուտին շատ
օրեք տայ և պատրիարքին ալ որ տէրու-
թեան ազաւեց աս բանիս համար։

Քրքաթ մէկ ֆէրմանով երեք հոգի բա-
տորուած էր, արոնց երկուքը մէկ թուղթով
իթլաի ընել տուին, քանի մը օր հաքը մ-
նոր թուղթն ալ կը խաւրենք ըսելով։ Նմա-
նապէս Սարաման մէկ թուղթով չորս հոգի
արտորուած կար։ Կիմայ մէկինը հանեցին
միւսերը չորս թուղթիկն ևն. ևն. և էն-
կիւսիցից համար զեռ ձայն մը չկայ, տէրու-
թիւնը ամէնունը միատեղ հանեց, բայց Հայք
կը ձգել կու ասն կոր, յուսաով որ ոչա-
ցնելով ճար մը ընեն զատնք չի դարձնելու
համար։

(Շարունակելի)

ԴԱՌՆՈՒԵԹԱՄԲ ԴԱՐՄԱՆ

(In amara salus)

Որչափ վտեմ է մեր Շարականաց պատ-
շաճութիւնը հանդիտած սօներու ու եկեղեցի
յական սարքերութեանց առ հասարակ։ Մեծ
Պահոցիները սակայն կամէնքն ալ կը գե-
րազանցեն։

Մեծ Պահքը Արամայ ապաշխարութեան
վերակոչումն է, աւելի զերբնական արժէքի
բարձրացած նոր Արամայ քառասնօրեայ ծո-
նապահութեամբ և արդիւնքով։ Ասոր հետեւի
Ա. Կիրակին կ'երգչուի առաջնոյն Զրաշալի
տոեղձումը, ըստ պատկերի երկրորդին, այն
պատկերին կորուստը դրախտին մէջ և անոր
վերստացումը Բրիտոսով։ Բ. Կիրակին ա-
պաշխարութեան ծանօթագոյն ձեւին՝ պա-
հոց վրայ մասնաւորելով երգը կը դրուատէ
ասոր յարմարութիւնը դարմանելու մեղաց
փնտր։

Հոս կենանք սաչ մը։ Ի՞նչ ըլլալու էր
մեղաց դարմանը։ Ի՞նչ բանով որ մեղանչէ
մէկը՝ նոյնով պիտի պատժուի. այս է՝ Խա-
րոյական օրէնքը. զոր նիւթականացնելով
քննութիւնը ըսած է։ Դառնութեամբ դմբան-
ել այս կը վայէր մարդկային անկուսի պա-
րագային։ Պա գայիցաւ ու գահավիժեցաւ
ճաշակաւք միջոցն (Երկ.), որ բարի երի
կնամիւր (Միւ. Ա.), որ ըսել է՝ քաղցրու-
թեամբ պաղոյն՝ մեղաց դառնութիւնը ծո-
րեց նախածնողաց հոգւոյն մէջ և արեւմտեա-
լորդութեամբ միւս գնահատութիւնը թուաւո-
րեց բոլոր մարդկային սերունդը. ահա՛ ի-
ւանդութիւնը։ Ի՞նչ է քաթմանը, ըսինք դառ-
նութեամբ դառնան։ և ահա պահոց դառնու-
թիւնը որ արուած է մեղ ճաշակելու համար
գիտցուցիւ Աստուծոյ արսուիրանաց։ Մէկ
խօսքով արգիլելու քաղցութեան վնասը պիտի
դարմանուի հրամայեալ դառնութեամբ։ Պահք։

Ինչո՞ւ համար բանասարկուն օձի կերպա-
րանքով ներկայացաւ խաբելու միւր նախա-
ծնող։ Ս. Գիրքը զայն կենդանեաց մէջէն
ամենախորամանկը կ'անուանէ, և օձն երի
մնանագոյն քան զանկեայն զաղան (Միւ. Ա.)

այդ նենգաւոր իմաստութիւնը կը նշանակէ
այն յարմարութիւնը, զոր ուրիշ կենդանի-
ներէ աւելի ունէր սատանան ներկայացնելու
նոյն իսկ ճապարակ, լպրծուն, խուսափուկ ու
սողոսկուն մարմնովը: Բայց ամենէն աւելի
վասն զի իր բերնին մէջ ունէր թոյնը, որով
բանասարկուն առաջին օրէն մարդասպան հե-
ղաւ և ստախոս. քաղցրապրուցիկ, անուշ
պտղոյ մը հրապուրանքով տեսէք ինչպէս կը
թափէ երկասլաք լեզուէն մեղաց թոյնը:
Խաբէական ու դաւաճան խօսակցութիւն մը
երկկեզու բերնի մը կը յարմարէր. անոր թոյ-
նը կրնար ծածկուիլ քաղցրահամ պտղոյ տես-
քովը: Ահա անկումի եղբրերը անփոփոռած:
Ի՞նչ պիտի ըլլար դարմանը: Մարդուն վե-
րականգնումը պիտի սկսէր այդ օձի գլխոյն
ջախջախումովը. նա սպասեցէ ֆու՛մ գլխոյ.
պիտի ամբողջանար նոյն վերականգնումը ա-
նոր վրայ կատարեալ տիրողութեամբ. ետո՛ւ
ձեզ իշխանութիւն կոխել զօձն եւ գկարծն
(Ղուկ. Ժ. 19). Ի վերայ իժից եւ փարթից
գնացեալ դու (Սղմ. Ղ. 13): Այս իշխանու-
թեամբ հաւատացեալք պիտի ըմբերանեն սը-
տութեան հայրը և որդիները, որոնց քոյնի
իժից ի ներոյ ջրանց անցա (Սղմ. ՃԼԺ. 4),
եւ զորս Բրիտոսս որակեց ծնունի իժից, եւ
Առաքելը նկարագրած է զօրեղ բառերով
առ Հովմ. Գ. Գլխոյն մէջ: Անոնք ըսաւ
խոստում ու անպիտանացած են. չկայ ա-
նոնցմէ մէկ հոտ մըն ալ որ փաղցրութիւն ար-
տաղէ, վասն զի անոնց շրթունքին ներքե
ծածկուած է իժի քոյնը եւ բերանին անէծ-
քով ու դառնութեամբ լեցուն են: Ասոր հա-
մար ալ զիւրազնաց են ոտքերնին արիւնհե-
ղութեան վազելու եւ դացած տեղերնին ա-
ւեր ու թշուառութիւն կը սփռեն, անոնք
խաղաղութեան ճամբան ճանչցած չունին,
վասն զի երբեք աչքի առջեւ չունին Առ-
տուծոյ երկիւղը, որ խաղաղութեան առա-
ջին պայմանն է (Հմտ. 12-17): Կրնա՞ր լա-
ւագոյն նկարագրուիլ ներկայ աշխարհի վի-
ճակը, Մեղքը թոյն հետեւանքը հիւանդու-
թիւն, մեղքը դառնութիւն հետեւանքը պա-
տերազմ, աւեր ու թշուառութիւն: Զանա-
գան վիրոֆ մեղաց հարստ յոգիս ի թշուառաց և

հետեւաբար ի քաղնապասիկ հիւանդութիւնս
կարօսացաք (Շրկ.): Բանասարկուն սերունդը
աճեցաւ Աստուծոյ որդեոց հետ եւ կը մնայ՝
ինչպէս որոմը ցորենին հետ. կարելի չէր որ
երկպառակութեանց, խռովութեանց եւ ա-
րիւնահղ իրարանցումի աւերն ու թշուա-
ռութիւնը չունենայինք. ի՞նչ է դարմանը.
այս ազգ ոչ իւրի երանէ բայց միայն աղօթիւք
եւ պահօք. մեղսունակ ճաշակումի դէմ ա-
պաշխարող զրկողութիւն պէտք է. թոյնի
դառնութիւնը պահոց դառնութեամբ չէ՞ղո-
ղօքացնելու է, ահա դառնութեամբ դարմանը:

* *

Պահոց պատուիրանը աստուածադիր օրի-
նաց մէջէն ժամանակաւ առաջինն է. որ զօ-
րեկնս արքութեան պահոց նախ ի դրախտին ա-
ւանդեցիր, զայն չպահելով մեռաւ արդարու-
թեան (Շրկ.): Բրիտոսս Տէրն մեր դարմանեց
զայն նախ պահելով փառանօրեայ, որով զդառ-
նութեան պսղոյն ժաշակին փոխեց ի փաղցրա-
զոյն օրինաց փոց ճաշակումն (Անդ). Եւսոյ
այդ ճաշակումէն առաջ եկած հիւանդու-
թիւններն ալ վրան տուաւ: Սակայն ուզեց
որ Առաքելոյն բացատրութեան համաձայն
լրացնենք չարչարանաց պակասը, այսինքն
մերձեցումը մեր հոգեոց. և ահա պահոց օ-
րէնքը, որով կրնանք կատարել այդ մերձե-
ցումը՝ խմելով զաւրախարար աստուածային
սիրոյ քաժակը եւ անով բժշկուիլ: Դառնու-
թեան դարմանն է այս, որ սիրոյ քաղցրու-
թիւնը կը զեղու մեր մէջ՝ փոխան դառնու-
թեան, զոր թափեց արգիլուած քաղցրու-
թեան ճաշակումը:

Ո՛րքան իրական է բարոյական կարգի մէջ
ալ դառնութեամբ դարմանը, in amaro salut!

Ս. ՅԱԿՈԲ ՄԵՐՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ՝

(Շար. եւ վերջ)

Անգամ մը Ս. Յակոբ գիւղ մը գացած էր
Հոն քանի մը աղքատ մարդիկ ուղեցին խա-
բէութեամբ դրամ շորթել անկէ: Ուստի իւ-

Տե՛ս Թիւ 180, էջ 8.

րենցմէ մէկը մեռեալ ձեւացուցին, և սուրբ եպիսկոպոսին աղաչեցին որ թաղման համար պէտք եղածը շնորհէ: Սուրբը աւելի անոր հոգւոյն հոգ տանելով, ձեռքը անոր վրայ դրաւ և անոր մեղքերուն թողութիւն խնդրեց: Բիշ մը հեռանալուն պէս, աղքատները ձայն տուին իրենց ընկերոջ որ ելլէ, ըսելով թէ եպիսկոպոսը անցաւ գնաց: Բայց ան չէր ելլեր. շարժեցին զինքը, կրկին և կրկին կանչեցին, անօգնւաւ. սոսա մեռելը իրօք մեռած էր: Ահ և սարսափ մը ինկաւ ամենուն վրայ, վազեցին խկոյն Սուրբին ետեւէն և աղաչեցին որ ներէ իրենց յանցանքին, զոր աղքատութեան պատճառաւ գործեցին, և ետ դարձնէ մեռեալին հոգին: Սուրբը զթաց անոնց վրայ և խնդրեցին կատարեց:

Նիկիոյ ժողովէն տասը տարի ետքը Արիտի աղանդակիցները վերջապէս յաջողեցան իրենց պետը աքսորքէ դարձնել Պոլիս, և կ'ուզէին եկեղեցի մտցնել: Պոլսոյ նոյն ատենուան հայրապետը սուրբ Աղեքսանդրոս և իր ուղղափառ ժողովուրդը այս պատճառաւ մեծ մտաւանջութեան մէջ էին, և ինչ ընելիքն չէին գիտեր: Այն միջոցին Սուրբ Յակոբ Պոլիս կը գտնուէր: Բաշաղեհց սուրբ Աղեքսանդրոս Հայրապետը և անոր հետ եօթը օր պահքով ալօթքով անցուց խնդրելով Աստուծմէ որ հերետիկոսապետին եկեղեցի մտնելը արգիլէ: Որոշեալ կիրակի օրը Արիտ իրեններուն հետ ճամբայ ելաւ դէպի եկեղեցին: Ճամբան քնսկան պէտքէն ստիպուած ընկերներէն բաժնուեցաւ ակող մը մտաւ: Ընկերները երկար ատեն սպասեցին, բայց տեսնելով որ զուրս չ'իլլեր, զուռը կտորեցին ներս մտան, տեսան որ, պէտքին հետ աղիքները դուս թափելով. հոգին փչեր է: Ահա այսպէսով Ս. Յակոբի և Աղեքսանդրոսի աղօթքը կատարուեցաւ, և Կ. Պոլսոյ ուղղափառ ժողովուրդը ազատեցաւ հերետիկոսապետին տաճարակապուտ անօրէնութենէն:

Մծբին քաղքին մէջ երկու երեւելի հեթանոս եղբայրներ կային, որոնք Մարկիոնի աղանդին և մարկիոնեան կախարդի մը օստիկ յարեր էին: Ասոնցմէ մէկը Կոստանդիանոսի պալատին մէջ քրիստոնեայ եղաւ և

Թագաւորին կողմէ եպարքոսութեան պատիւ ընդունեցաւ ու Մծբին զրկուեցաւ Հիպարքոս անունով: Միւս եղբայրը, որ Կերզոն կը կոչուէր, յանձն չառաւ սուրբ հաւատքը ընդունիլ: Ասիկա ի ծնէ անդամալոյծ որդի մը ունէր, որուն ոտքերը փոկի պէս իրարու վրայ կը փաթթուէին և միւս անդամները գոսացիր էին, բայց դէմքը գեղեցիկ էր և զուարթ, և մազը՝ գանգուր: Կերզոն լսելով թէ Սուրբ Յակոբ Ս. Մարուգէին հետ բաղամամայ անդամալոյծ մը բժշկեր է, կանչեց նոյն անդամալոյծը և եղիւթութիւնը ստուգելէն վերջը տղան տարաւ եկեղեցին, և Ս. Յակոբին և Ս. Մարուգէին ըսաւ. «Տեսի՛րք, ես կարծէի թէ ճշմարտութեան կը հետեւիմ և ոչ թէ մոլորութեան. բայց հիմա կը տարակուսիմ, չեմ գիտեր ո՛րն է ուղիղ ճամբան: Բայց եթէ, ինչպէս միւս անդամալոյծը բժշկեցիք նոյնպէս իմ որդիս ալ բժշկէք, պիտի հաւատամ թէ ձեր հաւատքը ճշմարիտ է, որովհետեւ ճշմարիտ Աստուծոյ զօրութեամբ միայն կարելի է բժշկել այս գոսացած մարմինը:

Մարկիոնեան կախարդը Կերզոնին խօսքերը լսելով անոր կ'ըսէ. Ականջ մի՛ դնեք այդ գալիլէացիներուն, որովհետեւ ասոնք չեն կրնար ոչ կաղերը բժշկել, ոչ ալ անդամալոյծը առողջացնել:

Ս. Յակոբ և Ս. Մարուգէ մկրտութեան աւագանը պատրաստել տուին և աղօթեցէ յետոյ մկրտեցին մանուկը որ ութը տարուան էր և անունը Յովհաննէս դրին: Ս. Յակոբ անոր գոսացած ձեռքերը տարածեց, ոլորուած ոտքերը իրարմէ բաժնեց և Ս. Մարուգէին հետ տղան ոտքի կեցուց և հրամայեց որ քալէ, և տղան սկսաւ համարձակ քալել: Կերզոն բոլոր ընտանիքովը և երեք հազար հարիւր հոգիով մկրտուեցաւ և կոչուեցաւ Պօղոս, և մարկիոնեանց կախարդութեան գիրքերը այրեց:

Մկրտութենէն տասը օր վերջը Պօղոս իր կնոջ և որդւոյն հետ պատրաստուեցաւ Ս. Մարուգէի վանքը այցելութիւն երթալու: Նոյն գիշերն իսկ տղան բռնուեցաւ ժանտամահէ, որ յսկորեան հիւանդութիւն կ'ըսուէր,

Առ. Յակոբյան, ձեռքով ծրուծագրված հաճախ
Պողոս աթապետ Բեաւանդ հիւանդ տրամադրեալ իրաց
դրամ) և վաճառեց իմաստը հանցողիկ
Հանքի մարմնացման տրամադրեալ զուգուղացի
խմելու ակնարկներն աւանդեց։ Մեծաւոր տա-
րին Ա. Մարգարէի պաշտեղիքը և զանա-
զ կրքանք մեր զաւակին հետ ուրախ զնուարթ
վաճառք գալ ձգապէս իմաց թեղի վրէ յարմարեց
զինքն զխառնուիլ որն Անտուած կու տաք թեղի
ինչ տն խնդրեց։ Ա. Մարտնդէ մէկէն լուս-
դրեց։ Ա. Յակոբյանը վաճառեց վաճառք Գաւր,
Իրիւն Վէ սուրբ թաղման հաճախ Ա. Յակ-
կոբ առ Պողոսին եղբորը Զիւպարքոսին և ու-
րիւ զկեղծեմներու հետ ինկոն վաճառք դիպ-
Տղանդաւառ եկեղեցւոյ բեմին, ստորեմանին
վրայ դրաւ և սկսեալ աղօթել։ Սուրբին աչ-
քին պտղեցնեցին Կեանքն իր զեղու և Մարգ-
արքան թող չարեցած Կաւ ինքնեկողմն իրուն
վզին վրայ դրաւ և աղօթն չարեցեցեց։ Սուր-
բը անքն Գաւրէն բռնելով ըսաւ. «Թախտախտ,
եղբայր, կանգնէ, Թիւղոսի Բրիտանի անու-
նովդ, Մանուկը աչքը բացաւ և սուրբն ու
ժողովուրդը տեսնելով մկաւ Աստուած օր-
նեւ, Երեմիայի տունը ուրախութիւնը անկա-
քաղքեղի եղաւ։»

Այս հրաշքին լուրը մէկէն ամէն կողմ
տարածուեցաւ, և երբ Ա. Յակոբ Մծրին
դարձաւ, ժողովրդեան խուռն բազմութեան
մը կողմէ գիմաւորուեցաւ և մեծ պատիւնե-
րով ընդունուեցաւ։

Ա. Յակոբ տեսնելով որ Մծրին քաղ-
քին մէջ հաւատարմից թիւը օր ըստ օրէ կ'ա-
ւելնայ և եկեղեցին փոքր կու գայ, նոր մեծ
եկեղեցի մը շինեց որուն տեղն ու ձեւը Աս-
տուած յայտնեց հրեշտակի մը միջնորդու-
թեամբ։

Նոյն տեսնելով Մանաճիւր Ռշտունի
ստուար բանակով մը յարձակեցաւ Ասորես-
տանի կողմերը Բակուր Բղեշխին վրայ. յաղ-
թեց անոր և պարսիկներուն որ անոր օգնու-
թեան եկած էին. ասպատակեց անոր երկր-
ները, շարդեց անխնայ ոչ միայն զինեալնե-
րը, այլ և խեղճ անդէն ժողովուրդը. և
գերի վարեց բազմաթիւ մարդիկ, որոնց մէջ
էին նաեւ Բակուրի որդին Հելուս և Ա. Յա-

կոբյանը ուրիշ տեղերէն։ Ա. Յակոբ ջա-
նաց Մանաճիւրը չ'ամենայն ուր անմեղ գե-
րիտելով ինչպէս նաեւ իր սարկաւազները
յաղթաւ յարձակէ. բայց Անանիոսը յանձն չ'ա-
ռնեց զձեզաւորը Կաւանքն ինքնուր, երբ
Մարգարէ գնաց թագաւորին զինելու։ Մանա-
ճիւրը զայրացաւ և հրամայեց ծովը նետել
մնացն ուրիշ տեղերէն։ Ասորէ վրայ Ա.
Յակոբ եւ Կաւանքն անդամ իմարիւթեամբ
լեցունեց թարձք չ'ու մը ելաւ, ինչպէս Ռշ-
տունեաց գաւառը Կեանքէր, եւ անիւնց Մա-
նաճիւրը եւ Ռշտունեաց ամբողջ գաւառը։
Այս անգամ ինչ հետեմանքները խելոյն տե-
նուեցան։ Մանաճիւրը զգոն մահուամբ հոգին
փչեց և իր արդատաւ զաւառը դարձաւ
կողաւ անդամները։ Ա. Վրթանէս հայրա-
պետը Վրթանէս թագաւորը աս բանս որ
շնչեցին, հրամայեցին գերիները ազատ արձա-
կել, և երթալ Սուրբն խնդրել որ իր ա-
ղօթքով իջեցնէ Աստուծոյ բարկութիւնը։
Մանաճիւրի որդին Չուրա, Սուրբն մահէն
ետք խիստ ապաշխարութիւններ ընելով,
Սուրբն բարեխօսութեամբ ազատեց անէծ-
քէ ինքզինքը և իր գաւառը։

Սուրբ Յակոբ այս վերոյիշեալ գէպերէն
յետոյ տարի մը եւս ապրեցաւ և կանխաւ
իմանալով իր մահուան օրը, հանգիստ սրտով
աւանդեց իր սուրբ հոգին Աստուծոյ ձեռքը
347ին։

ԱՆԵՏՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ Կ'ԸՆԷ

Սոյ կաթողիկոսը Սապայեան, անգամ մըն
ալ ուղած է շեշտել անխարոզութեան օրէնքը,
իւր կանոն քրիստոնէից միաբանութեան։ Նա
Հաճնոյ մէջ գտնուող աւետարանական բո-
ղոքականաց ժողովարանը գացած և հոն այդ
նիւթին վրայ քարոզ խօսեր է և անկից հո-
գեւորապէս մխիթարուած մեկներ է։

Արձագանգի մէջ նման առթիւ մը¹, նոյն
Սրբազանին ընթացքին թեթեւ, անիմաստ և

¹ Տես Արձ. թիւ 113, 114, 115, 116, եղմամբ
նախան եկեղեցի տիտղոսով։

իր իսկ եկեղեցւոյն սկզբանց հակասական ըլլալը գրուեցաւ ժամանակին: Այս անգամ, որքան ալ աչքի առջեւ չունինք նոյնին քարոզը, վերհանելու համար իմաստուն խորհուրդներ, դորս Բիզանդիոն իրեն կը վերագրէ, կ'ուզենք սակայն երկու խօսք կրկնել անոր համար որ անխտրողութեան բողոքական օրէնքը կ'ուզուի անպատճառ Հայ Եկեղեցւոյ ալ կանոն հաւատարմաց ընել: մինչդեռ սա է այն մայրութիւնը՝ որ բողոքականութեան, Թեոփիստութեան, և վերջերս Արդիականութեան հիմնաքարն ըլլալով, բաժանեալ եկեղեցիներու մէջ մուտք գտած է դժբախտաբար, հաւատքը վտարելու և անոր վերջին հետքերն ալ բնաջինջ ընելու համար:

Վերապահելով ընդարձակ տեսութեանց շարք մը ուրիշ առիթի, այս անգամ կ'ըսենք պարզապէս թէ անխտրողութեան կանոնը կը ջրէ 1. Հաւատքի միութիւնը, 2. Ստուգութիւնը, 3. Պէտքը:

1. Հաւաստի միութիւնը կը ջրէ. վասն զի իրարու հակասող հաւատքներ հաւասարապէս ընդունելի նկատելով՝ Բրիտանի Տեառն մերոյ ըսածին և բանականութեան իսկ հակառակ կ'ենթադրէ թէ ով որ կը ցրուի, կը ժողովի. մինչդեռ Յիսուս մէկ ըլլալով կարելի չէ անոր շուրջ և անոր հետ ժողովել և կազմել Անոր սեփական, գործոց բարութեան նախանձաւոր ժողովուրդ՝ այսինքն Եկեղեցի, առանց հաւատքի. մի է Տէր. մի հաւատք, մի մկրտութիւն (Եբ. Դ. 5): Անշուշտ այս իմաստով կ'աղօթէ Խաչայեանն ալ եւ եւս վասն միաբանութեան ճշմարիտ եւ սուրբ հաւատոյն մերոյ:

2 Կը ջրէ հաւաստի ստուգութիւնը, վասն զի հակասող հաւատքներ միանգամայն ստոյգ չեն կրնար ըլլալ, միոյն ստուգութիւնը միւսները կը խափանէ. եթէ չի կրնար խափանել ըսել է թէ աս ալ ստոյգ չէ և անհակոնական սկեպտիկութիւն ու խաւար: Եթէ աչքդ, որ մարմնոյ ճրագն է, լաւ է՝ մարմնիդ լուսաւոր է, եթէ չար է՝ մարմնիդ ալ խաւարին պիտի ըլլայ, ըսած է հաւատքի Հեղինակն ու Կատարիչը՝ Քրիստոս: Ուստի

մեր պարագային ալ եթէ հաւատքը ստոյգ է, անով առաջնորդուող խորհրդաւոր մարմինը, Եկեղեցին, լուսաւոր է, հակառակ պարագային մութի մէջ է: Խաչայեան սրբազան զոհանալու է այս պարագային մութ աչքով ուրիշին առաջնորդել, որովհետեւ գիտնալու է թէ ի՞նչ կը պատահի երբ կոյր մըն է կոյրեռու առաջնորդը:

3. Կը ջրէ հաւաստի պէսք. միայն ստոյգ, և ճշմարիտը հարկադրիչ կրնալ ըլլալ, ինչ որ հարկադրիչ է, այն միայն պէտք է. երբ հետեւարար հակասող հաւատքներ հաւասարապէս կրնան բաւել փրկութեան, ոչ մէկը կարելի ու հարկադրիչ կրնայ ըլլալ, հետեւարար տգատ կ'ըլլայ ամէն ոք ընդունելու կամ մերժելու: Այս պարագային անխտրող են հնազանդութիւն հաւատքը (Հռոմ. Ա. 5). հաւաստուն կաշի հաւատք (Ա. Կորն. ԺԶ. 13). կամ քակելի ի հաւատք (Ա. Տիմ. Դ. 1). անսկիզ հաւատքով (Անդ. Դ. 6) կամ վրիպիչ ի հաւատք (Անդ. Զ. 21): Նոյնպէս նշանակութիւն չունին անկեղծաւոր հաւատք (Ա. Տիմ. Ա. 5), ողորակ հաւատք (Տիմոթ. Բ. 2), անխիղի հաւատք (Բ. Տիմ. Ա. 5), Անխտրողութիւնը որ Քրիստոս Բնիարի, յոյր խաւարի, ճշմարիտը սուսին հետ հաշտեցնել կ'ուզէ, անշուշտ հաւատքը անկարելի ու նկատելու է՝ թողլով զայն անհասնելու խղճին, կարելի և բաւական նկատելով միայն քաղաքավարական վերաբերումները նոյն իսկ Կրօնքի եւ Եկեղեցւոյ մէջ և այս կ'ըսուի comédie!

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՌՈՒ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Յնվ. 22ին գումարուած Կարգինալաթոգովին մէջ Բենեդիկտոս ԺԵ. Ս. Քահանայապետը բանաստեղծութիւն մը ընելով յայտնէր է որ պատերազմի վերջը փութացնել կարելի չըլլալով, իրեն կը մնայ անոր տխուր հետեւանքները թեթեւեղելու աշխատիլ. եւ կ'ըսէ. «Ասկէ տեղին ընել չի ներեր Մեդի՝ Մեր Առաքելական պաշտօնը»: Կը չեղան որ թէ եւ

Հոռմի Բահանայապետին անկ է արգարու-
թեան խնդիրներու մէջ իրաւարար ըլլալ, սա-
կայն ոչ պատշաճ եւ ոչ ալ օգտակար է Բա-
հանայապետին իշխանութիւնը խառնել նոյն
խակ պատերազմիկներու վէճերուն մէջ։ Ուս-
տի պէտք է որ ամէն մարդ իրաւունք ստայ
Ս. Աթոռին բացարձակ անկողմնակալու-
թեան... Աս ըսելէ յետոյ Ն. Սրբութիւնը
կոչում կ'ընէ թշնամի ազգերու մարդկային
զգացումներուն, որ անհրաժեշտօրէն հարկ
եղածէն աւելի աւեր չգործուի, մանաւանդ
մնաս չհասցուի ժողովրդեան նուիրական ի-
րաւունքներուն։ Կը յանձնարարէ յետոյ
գրաւուած տեղերու ժողովուրդներուն չդիմել
կարգապահութիւնը խանգարող միջոցներու
եւ այնպէսով չվատթարացնել իրենց կացու-
թիւնը։ Ապա Ն. Սրբութիւնը ակնարկու-
թիւն մը ընելով խաղաղութեան համար աշ-
խարհի ամէն կողմերը եղած աղօթքներուն,
կը կնքէ իր խօսքը։

* * * Ծննդավայր Արք. Արհի. Բարոնի exe-
quatur, որ անհիմն պատճառներով յետա-
ձրգուած էր, տրուած է վերջապէս իտալա-
կան կառավարութեան կողմէ։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ. —
Ամենապատիւ Հոգեւոր Տէրը, Ազգային
Սիւնհոգոսի հրատարակութեան առթիւ, հո-
վուական թուղթ մը գրեց ճշմարիտ Կաթողի-
կիին հսկան հանգանակներուն վրայ, որուն
մէջ նախ Սիւնհոգոսին պարտաւորիչ ըլլալը
չեղանէ յետոյ կը յորդորէ ժողովուրդներին
ու ժողովուրդը ճշմարիտ Կաթողիկէ ըլլալու
եւ ապա կ'ուսումնասիրէ կաթողիկէ սնունդ
ծագումը. կը ցուցնէ թէ պէտք է որ ճշմա-
րիտ Կաթողիկէն եկեղեցւոյ եւ անոր իշխա-
նութեան յարած մնայ, հնազանդի Աստուծոյ
եւ Եկեղեցւոյ պատուիրաններուն, եւ իր
հաւատքը գործքով ալ ցոյց տայ։ Ակնարկ
մը կը ձգէ յետոյ ժամանակիս կաթողիկէնե-
րուն վրայ եւ կը վերջացնէ կրկին յորդորե-
լով զամէնքը որ սուտանուն կաթողիկէու-
թենէ հեռանան եւ ճշմարիտ կատարեալ կա-
թողիկէութեան փարին բոլոր սրտանց։

Հարկ չկայ ի վեր հանել այս Պատրիարք-

քական Կոնգակին ամենամեծ կարեւորու-
թիւնը եւ ժամանակիս յարմարութիւնը. ուս-
տի կը յորդորենք մեր պատուական ընթեր-
ցողները որ թէ՛ իրենք փութան զայն կար-
գալու եւ թէ՛ ուրիշ կաթողիկէ հաւատա-
դեալներու ալ նոյնը կարգաչեն վստահ ըլ-
լալով թէ մեծ օգուտներ պիտի քաղեն։

* * * Փետրուար 11ին. հինգշաբթի օրը,
Ա. Յ. Կարգին Մայր Վանատան մատուոն
մէջ ձայնաւոր պատարագ մատուցուեցաւ եւ
ապա հանգստեան պաշտօն կատարուեցաւ
նոյն Կարգին քաղմերախտ Հիմնադրին՝ եր-
ջանկայիշատակ Հասուն Կարգինալին հոգ-
ւոյն համար, ի ներկայութեան Ամեն. Հոգե-
ւոր Տիրոջ, Արհի. Արհի. Ռոքոսեան, Սա-
յեղեան, Սիւլեան եւ Նազլեան Արքեպիսկո-
պոսներուն ու եպիսկոպոսներուն եւ քաղմթիւ
Գերջ. եւ Գեր. վարդապետներու եւ ժողո-
վրդեան, Հաւատամքէն առաջ Արհի. Նազ-
լեան հօր պերճախօսութեամբ ի վեր հանեց
վսեմութիւնը Ս. Վարդանանց եւ Հասուն
Կարգինալին հետապնդած նպատակին։

* * * Վերջերս Ս. Յովհան Ոսկերեան ե-
կեղեցւոյն մէջ Նպաստից Յանձնաժողով մը
կազմուեցաւ եւ գործի ձեռնարկեց անօգնա-
կան եւ աննեցուկ ընտանիքներու օժանդա-
կելու համար, յատկապէս այս քաղմաղէտ
ձմրան միջոցին, ուր թշուառներու թիւը օրէ
օր կ'աւելնայ։ Այս ամենակարեւոր ձեռնարկը
արժանի է ամէն տեսակ քաջալերութեան եւ
օժանդակութեան։ Ուստի կը մաղթենք լի-
ուրի յաջողութիւն եւ յարատեւութիւն։

* * * Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ
Յունուար 23ին Յիսուսի Ս. Սրտին իննօրեայ
ջնոմեռանդութիւնը սկսաւ եւ վերջացաւ
Յունուար 31ին։ Ամէն օր առաւօտեան ժամը
10ին պատարագ մատուցուեցաւ Յիսուսի Ս.
Սրտին Ընկերութեան կենդանի եւ ննջեցեալ
անդամներուն համար, որմէ յետոյ աղօթք-
ներ տեղի ունեցան։ Իրիկուններն ալ ժամը
4¹/₂ին դարձեալ մասնաւոր աղօթքներ կա-
տարուեցան եւ Ս. Հաղորդութեան օրհնու-
թիւն արուեցաւ։

Արհի. Նազլեան, Տրապիզոնի վիճակա-
որը, իր սովորական հոտնդով նոյն եկե-

ղեցւոյն մէջ քարոզեց Յիսուսի Ա. Արտին վրայ Յունուար 24ին, 29ին, 30ին և 31ին իրիկունները, Վերջին իրիկունը Ս. Հաղորդութեան օրհնութեամբ փակեց հանդէսը:

* Յառաջագոյն, այլեւայլ առիթներ ներկայանալուն, յաճախակի յիշատակած էինք թէ հիմա օրինաւոր Աւագանուոյ և Վարչական ժողով մը գոյութիւն չունի, և հետեւաբար պէտք է ունենալ վարչական մը որ՝ օրինաւորապէս գումարուելով բնդ նախագահութեամբ Արհի. Տեղապահ Արք. ի, զբաղի Հասարակութեան ստիպողական գործերով, ուստի Արհի. Տեղապահը այս սրակաս յրաճեցնելու համար, Կիրակի օր, Փետրուար 7ին, զումարեց այն արտակարգ ժողովը, զոր, ինչպէս ըսած էինք մեր նախընթաց թիւին մէջ, հասարակութեան անկանոն վիճակին բերմամբ եւ պարագայից ստիպմամբ, Կառավարութիւնը Տեղապահի ընտրութեան եւ միանգամուտեան համար միտքն ստանալով էր:

Այդ առթիւ էջմիածնական թերթերը՝ ըստ իրենց սովորութեան, անճիշդ եւ դիտումնաւոր յերիւրանքներ խառնեցին իրենց տուած լուրերուն մէջ, նպատակ ունենալով միշտ Կաթողիկէ Հայոց մէջ եկեղեցականութիւնը վարկաբեկած եւ աշխարհական տարրը, իրենց դժբախտ նմանողութեամբ, տիրապետող յոյժ տալ: Մինք, յանդորրութիւն ճշմարիտ Կաթողիկէից, կ'ուզենք ուղղել այս սխալներուն երկուքը միայն, առ այժմ զանց ընելով ուրիշ անճշգրտութիւնները: Ա. Տոմարի խնդիրը այլափոխուած է, Արհի. Տեղապահը գիտնալով որ Նոր Տոմարի գործածութիւնը Աւագ Թեմիս մէջ եւս օրէնք եղած է արդէն, կ'ուզէր իր գրութեանց մէջ նոր տոմար միայն գործածել. այլ եղած դիտողութիւնները իրաւացի գտնելով, այսինքն նկատելով որ քարոզիկական գործառնութիւններն և թղթակցական յարաբերութիւնները կը կատարուին նաեւ Կառավարութեան եւ միւս արեւելեան ազգերու հետ՝ որոնք հին տոմար կը գործածեն, պատշաճ դատեց քարոզիկական շուրջանական գրութեանց մէջ Նոր Տոմարի հետ գործածել նաեւ հին թուականը. ահա այս-

չափ: Ուստի բացարձակ չարամտութեան արդիւնք է ասկէ իբրեւ թէ հետեւցնել որ «Տեղապահ Սրբազանը Հին Տոմարը ընդունեց». այսպիսի թերթերէն սակայն, և այսպիսի տեղեկատուներէն բարեմասութիւն եւ ուղղութիւն սպասելը յիրաւի աւելորդ է: Իր ստորագրութեան մասին եւս այլընդ-այլոյ զրոյցներ հրատարակեցին, միեւնոյն նենգամիտ նկատումներով: Արդ, պէտք է գիտնալ որ Պատրիարք բառը իր անուններով, հայերէն լեզուին մէջ, ինչպէս յունարէն եւ ուրիշ եւրոպական լեզուաց մէջ, հոգեւոր իշխանութեան յատուկ է, իսկ աշխարհական իմաստով՝ իբր կառավարական տուչութիւն, պէտք է Բարրիկ բառը գործածել (Տես Արհ. Գ. Տարի, 5 Ապր. 1913. թիւ 89, էջ 209). Տեղապահ Արք. ը որ մի միայն քաղաքական գործոց իրաւասու է, կ'ուզէր չեղտել իր պաշտօնին սրակութիւնը, եւ ահա ասոր համար եղած դիտողութեանց առջեւ՝ որոշեց որ պաշտօնական գրութեանց մէջ, ռեւէ լեզուով խմբագրուած ըլլան անոնք. ինքը ստորագրէ Բարրիկ Գալմանագաւը, ասով Կատարելապէս հասնելով իր արդարացի դիտումին:

— Ի վիճակի ենք յայտարարելու թէ Հոգեւոր իշխանութիւնը միշտ կը մնայ հաստատուն ինչպէս իր սկզբանց, նոյնպէս և իր հաշտարար ընթացքին մէջ, որով կը յուսայ որ եւ իցէ ապօրինի շարժումներուն եւ դիտումներուն առաջքը տուել:

Իսկ նոր վարչական ժողովոյ ընտրութեան հետաքրքրական մանրամասնութեանց վրայ կը վերապահենք ամբողջական տեղեկութիւն տալ երբ վերջնականապէս կազմուած ըլլայ այն:

* Յունուար 31ին, Սէնթ-Էսքրի Մայր Եկեղեցւոյն մէջ Ս. Յովնան Ոսկերեքանի տունին առթիւ, ձայնաւոր պատարագ մատուց Կ. Պոլսոյ Առաքելական Նուիրակ Արհիպատիւ Տոլչի Գերապայժառը: Պատարագին ներկայ գտնուեցաւ Ամեն. Հոգեւոր Տէրը, հետն ունենալով Արհի. Արհի. Յովսէփ Արք. Ռոքոսեան, Օդոսո. Արք. Սայեղեան, Մատեպս. Սիւլեան, Վենետիկոյ և Վիեննայի Միութարեան Հայրերուն Պոլսոյ Վանատուներուն

Վեր. Վեր. Մեծաւորները. Ն. Գերբըջան-
կութիւնը նոյներուն եւ Արհի. Նաղիւն
Գերջին հետ ներկայ եղաւ նաեւ նուիրակա-
տան մէջ նոյն օրը տրուած ճաշին:

— * Փետր. 1ին, իր ինչ ինչ գործերուն հա-
մար Գոյիս եկաւ Ատանայի վիճակաւոր Արհի.
Յարութիւն եպսկ. Քէջլիքեան եւ Փետր.
10ին իր տեղը դարձաւ. Նոյնպէս 13ին հա-
սու Պրուսայի եպսկ. Արհի. Ճամճեան, իր
թեմական գործերու կարգադրութեան համար:

* Վեր. Հայր Վրթանէս Վ. Բունկու-
ցեան հոգաբարձու անուանուեցաւ Բանկալ-
թիի Ա. Յ. եկեղեցւոյն:

* Փետր. 8ին, Պոլսէն Տէտէ Աղաճի ճամ-
բով Հոռոմ մեկնեցան կղերականացի վեց ուսա-
նողներ:

* Փետր. 8ին, կէսօրէ առաջ, Կաթողի-
կոսարանին մէջ տեղի ունեցաւ Աւագ Թեմի
քահանայից ամսօրեայ կրթութիւնը. Նոյն
օրը կէսօրէն յետոյ գումարուեցաւ բարոյա-
կամ ինքիքներու ժողովը:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. —
Օսմ. Մերակուտական ժողովը իր Փետր. 8ի
նիստին մէջ քուէի բացարձակ մեծամասնուե-
թեամբ ընդունեցաւ Սահմանադրութեան 7րդ,
43րդ եւ 102րդ յօդուածներուն փոփոխու-
թիւններն որ եղած էին Երեսփոխանական
ժողովին կողմէ հետեւեալ կերպով.

Յար. 7. — «Առաջինին նուիրական իրա-
ւունքներն են... են. Խորհրդարանը սովոր-
ական ատենին բանալ ու փակել, թէ՛ փա-
մանակէն առաջ եւ թէ՛ արտասովոր կերպով
նիստի հրաւիրել Խորհրդարանը, երկարա-
ձգել տեւողութիւնը. Խորհրդարանի գումա-
րումը առկախել՝ երեք ամիսը չանցընելու եւ
չկրկնուելու պայմանով, Խորհրդարանը առ-
կախել որոշ տեւողութեամբ մը որ պէտք է

ամրողջացուի նոյն տարեշրջանին մէջ. 35րդ
յօդուածին համաձայն ի հարկին լուծել Ն.
րեալի. Ժողովը. ամէն տեսակ դաշնադրներ
կնքել, են...»

Յօդ. 43. — «Խորհրդարանի ելկու ժողով-
ները ամէն տարի Նոյեմբերին սկիզբը, եւ եթէ
թէ յետաձգում տեղի ունեցած է, յետաձգ-
գումի տեւողութեան լրանալուն, կը գրու-
մարուն առանց հրաւերի եւ կը բացուին
Կայս. Իրատէով. Նստաշրջանի տեւողութիւ-
նը չորս ամիս է. եւ այս տեւողութեան լրա-
նալուն, Խորհրդարանը դարձեալ կը փակուի
Կայս. Իրատէով...»

Յօդ. 102. — «Ելմտացոյցը մէկ տարեշրջան
համար միայն ուժ ունի եւ այդ տարիէն գուրու
գործադրելի չէ եւ իր գործադրութիւնը կա-
րելի չէ խանգարել Խորհրդարանը յետաձգե-
լով կամ ընդհատելով. Միայն եթէ Երեսփ.
ժողովը առանց ելմտացոյցը քուէարկելու
լուծուի... են...»

* Օսմ. տեղեկատուութեանց դիւանը
հետեւեալը կը հաղորդէ. — Լիբանանի Մա-
րօնիները որ, հին սովորութեան մը համա-
ձայն, ցարդ կայս. կառավարութեան չէին
դիմեր իրենց Պատրիարքին պաշտօնը վաւե-
րացնելու համար եւ որ Ֆրանսայի դեսպան-
ներուն միջամտութեան շնորհիւ եւ հին ու-
ժիմին օրուան կառավարութեան թախան-
ձանքներուն հակառակ կը շարունակէին այդ
սովորութիւնը, հիմա, կառավարութեան ազ-
դարարութեանը վրայ հեռագրով խնդրեցին
դատական ու կրօնական դործոց նախարա-
րութենէն, որպէս զի Պատրիարքին ու մետ-
րապոլիտներուն պաշտօնները վաւերացնող
Ֆէրմանները շնորհուին. Այդ կերպով հա-
տակեցան Պատուութեան օրէնքներուն, որոնց
ենթակայ են օսմ. հպատակ քրիստոնեաները:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն		
Դէպքեր եւ սկզբունքներ	33	Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ
Աղօթք	38	Անխորհուրդներ Իճէ կ'ընէ
Հին վաւերացուիքեր	40	Տեղեկագրական
Դառնութեամբ դարման	41	

ԱՐՏՈՒՆԱՏԵՐ
ՅՈՎԼ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ
ՏՆՕՐԼՆ-ԽՄԱՍԻՐԱԳՈՏ
ԳԷՈՒԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊՈՒՇԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արսասահ-
ման տար. Ծր. 10. վեցամս. 5 — Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ — Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.
Պոլս:

GATOGHIGUIÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5. — Յօդուածներու
ձեռագիրները պէտք է զրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն:

Խաթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է՝ որ և իցէ սպազական գործոց համար: Եւ տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէներ,
մահազդէներ, եւն. եւն.: Գիները անմեղքի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մագրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գօճ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwickau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLÉ

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGES (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.